

ՇՈՒՇՈՒՑ—ԹԱԼԻՌԻԶ *

(Ժանապարհորդական նկատողութիւններ)

III

Մանում ենք Հասանօվի ձորը։ Զորի սկզբում երեսում է Մելքոն թուրքաբնակ գիւղը։

—Եյդ գիւղն էլ պատկանում է Ալաջիշայի Ղահրաման-խանին, —բացատրում է չարվաղարը։ —Խանն ազրում է հրէն այն սպիտակ տանը, որ այստեղից երեսում է դէպի Արագի կողմը։ Հէնց մեղ պատահած աւաղակները պատկանում են այդ խանին, որը միշտ իր մօտ ապաստան է տալիս Ռուսաց հողից փախած զաչաղներին։

Երկու տարուց յետոյ, երբ Կովկաս էի վիրադառնում միենոյն ճանապարհով, այդ Մելքոն գիւղը բոլորովին աւերակ գըտայ։ Նասրէդղին Շահի մահից յետոյ Ղահրաման-խանը, ինչպէս յայտնի է, ապատամբուում է, և կառավարութեան զօրքերը նըրան զսպելու նպատակով զալիս են և խանապատկան գիւղերը հրդեհում։

Հասանօվի ձորն ութ ժամուայ ճանապարհ է։ Այստեղ դուք կը հանդիպէք միաժամանակ և Ռազմավիրական ճանապարհի վայրենի վեհութեան և Դիլիջանի գեղանկար, մեղմ տեսարաններին։ Հասանօվի մի մասը նեղ կիրճ է։

Մանում ենք քարերի աշխարհը։ Ամենը տեղ քար է, գորշ ու քար։ Ամեն քայլափխում մոայլ ծերպեր, բուրգանման քերծեր, նեղլիկ ձորակներ, անտակ անդունդներ... Աջ և ձախ գէպի ամպեր են բարձրանում լերկ և սեպաձև ժայռեր։ Վերի

*.) Տիս Մուրճ № 1:

նայելիս մարդու զլուկիս պտառում է, աչքերը մթնում: Ճանապարհը ընկած է աջ ժայռի կրծքով, ձախ կողմը ոչնչով պաշտպանուած չէ. մի անզգոյց քայլ, և իսկոյն կը զլորուես գէպի անդունդը: Խելացի և այս տեսակ կածաններին վարժ ձիերը դգուշութեամբ քայլում են. երեւմն Կրանց սմբակների տակից քարերի կոյտերը շառաչելով թափւում են և անյայտանում մթին ձորի մէջ:

Զորի գետակը միշտ կատաղած է: Փրփուրն երեսին նա յարձակւում է տեղ-տեղ կուտակուած քարերի վրայ և չը կարողանալով խորտակել ամրակուրծք ախոյաններին, բարձրածայն մոնչում է և վեր-վեր բարձրանալով թափիթփուում է ըսպիտակ մանր ջրվէժներով:

Երկու ժամ՝ շարունակուում է կիրճը, յետոյ նա այնքան է նեղանում, որ հինգ ձիաւոր շարքով հազիւ կարողանան անցընել. վերելից երկնքի միայն մի նեղ չերտ է երեւում: Մեր անդնելու ժամանակ կիրճը պահ մի մթնեց. —ապառաժների թագաւոր արծիւն էր, որ սաւառնում էր երկնքուում:

Կիրճը յանկարծակի լայնանում է և ձորի կերպարանք ըստանում: Կէսօրից երկու ժամ անց է, պէտք է կանգ առնել. սակայն ձորի մէջ տեղ չը կայ գիշերելու, ստիպուած ենք բարձրանալ Մըլքեանդ թուրքաբնակ զիւզը, որ գետեղուած է աջակողմեան սարի վրայ: Մի ամբողջ ժամ՝ բարձրանում ենք ուղղաձիգ սարի լանջով. ձիերն առջելից գնում են, մենք էլ պոչից բռնել ենք, որ ներքե չը զլորուենք: Մեծ չարչարանքով մի կերպ տեղ ենք հասնում: Եւ այսպիսի ճանապարհով զիւղացիները ամեն օր երթեեկութիւն են անում. . .

Հիւրասէր գիւղացին մեղ պատւում է այս զիւղին յատուկ անուշահոտ մեղբով: Ճաշից յետոյ գնում եմ զրօննելու մօտակայ այգում, ուր կան խոյանման գերեզմանապարեր: Շատ քարերի վրայ տեսայ հայերէն արձանագրութիւններ. ուրեմն այստեղ մի ժամանակ հայեր էին ապրում:

Դուրս եկայ այգուց և նստեցի ձորի զլիսին մի մեծ քարի վրայ: Գիշերը վրայ է հասնում հարաւային երկրներին յատուկ արագութեամբ: Ահա շուաքը բարձրացաւ զիւացի սեպածե ժայռի վրայ, ամբողջովին ծածկեց նրան: Հեռաւոր հորիզոնում երեացող սարերն իրանց կապտագոյն շղարշը փոխարինում են սեի: Երկնքի վրայ մէկ-մէկ սկսում են երեալ աստղերը, որոնք սկզբում պլազում են թոյլ, դալուկ լոյսով, ասես ահա քամին նրանց կը հանդինէ: Չորի խորքում ջրաղացի դանից երեւում է փաքրիկ կրակ: Չորս կողմա ոչ մի ձայն չէ լսում, միմիայն չդիկն աննշմարելի կերպով զիսիս վրայ գործում է զողոցիւն

թեւերով իր միստիկական թռիչքները։ Գիշերը հասաւ, ձորի գետակն աւելի ազմղալից դարձաւ։

Հետևեալ օրը նորից իջնում ենք ձորը՝ ճանապարհը շարունակելու։ Զորի ճախակողմեան լեռները պատած են անտառներով, սակայն ածխադործները մեծ վնասներ են հասցընում երբեմն կուսական այդ ծմակներին։ Փայտնատի կացինը չէ խնայում նոյնիսկ ձորում բուսած ընկուզենիներն ու տնչըրբները (զիարե)։ Զորի վերջին կայ մի հոյակապ, սրբատաշ մեծ քառակուսի քարերից կառուցած կիսաւեր քարվանսարայ։ Այսպիսի քարվանսարաներ տեսել եմ և Զուլֆայի ճանապարհին։ Սրանք և կուտափիրինի հին կամուրջը մի ժամանակի դործ պէտք է լինեն, սրովհետեւ ոճը միտակեսակ է։ Այս հպարտ շինութեան մօտ կուչ է եկել մի խոճուկ, ցեխապատ շինութիւն, կարծես, սիմբօլական նշան արդի Պարսկաստանի և անցած-դնացած օրերի... թէյատուն է այս սամօվարը խուլ անկիւններն էլ է մուռտք գործել։ Բերում են մեզ համար թէյ, մուռ և շատ քաղցր, ինչպէս սովոր են պարսիկները խմելու, փոքրիկ և մէջքը նեղ—«կօրսէտաւոր» բաժակների մէջ։

Մեր դէմ կանդնած է ճիւնապագաթ իւլընա սարը, որի լանջով ընկած է ճանապարհը։ Երկու ժամուայ ընթացքում բարձրանում ենք սարն ի վեր։ Այս տեղից, ինչպէս հաւատացընումէ չարվագարը, երեսում է Քիրսը։ Անցնում ենք կանչապատ լանջերով։ Ճիւնի զօտին շատ հեռու է մեզանից։ Օդն այնքան թափանցիկ է, որ ձորի մէջ հոսող զետակի ձայնը պարզ ականջիդ է համուում։ Ահա մօտակայ լեռներից փչեց թարմ և կինսարար մեղմ քամին, իր հետ բերելով խոտերի և ծառերի բուրմունքը, մարդկային բնակչութիւնից հեռու, լայն և ազատ տարածութեան շունչը, որ քաղցր է և թանկագին, քան քաղցքների բոլոր զուարձութիւնները։ Այս կինսարար օդը զթառատ մօր ձեռքի պէս զուրգուրում է երեսդ և նեարդերդ բուժումնեւ։

Տափարակ երկրում ապրող մարդիկ հաւատացնում են, թէ բարձր սարեր տեսնելիս նրանք անախորժ տպաւորութիւն են զգում։ իբր թէ սարերը ճնշում են մարդուն, իբր թէ մարդ զգում իր ոչնչութիւնը վիթխարի լեռների և տարերային աղմըկալից երեսյթների առջեւ։

Սակայն ինձ վրայ, իմ հոգու տրամադրութեան վրայ, ընդհակասակը, լեռները բարերար ազգեցութիւն են անում։ Ես հոգով բարձրանում եմ, երբ սարերի զադաթները և բնութեան վեհութիւնն եմ տեսնում իմ մտածողութիւնը պարզ-

ւում է և ամրապնդւում, երբ դիտում եմ, թէ ինչպէս ժայռերը
և վաղող ջուրն իրար հետ պայքար են մղում:

Սարից իջնում ենք և երկար գնալուց յետոյ հասնում Աղ-
բուզաղ թուրքաբնակ գիւղը: Իմ չարփաղարն աղբուզաղի է,
մեղ հրափրում է իր տունը:

Այս գիւղում առաջին անգամ տեսնում եմ «օդա», որը ոչ
այլ ինչ է, եթէ ոչ զոմի շարաւնակութիւնը. սակայն «օդայի» յա-
տակը մի արշինաչափ բարձր է զոմի յատամից և զոմից բա-
ժանուում է պատով, որը սակայն առաստաղին չէ հասնում, այն-
պէս որ «օդայից» երեսում է ամբողջ զոմը, իսկ սրա հոտերը և
տաքութիւնն ազատ մուտք ունեն «օդայի» մէջ: Օդայում «վըր-
թողաղի» փոխարէն բուխարի է: Աղբուզաղից սկսած արդէն
փայտի սակաւութեան պատճառով աթար են վառում:

Նոր էինք տեղաւորուել օդայում, երբ մի խումբ թուրք
կանայք եկան և շար ընկան զոմում, օդայի պատի առջի:

— Հաշիմ... անվտան կերպով շնչաց նրանցից մէկը:
— Բալի:

— Բարով ես եկել, Հաշիմ (իմ չարփաղարի անունն է):
— Բարով կենաս, բաջի:

— Գլխիդ զուրբան, Հաշիմ, մեր մարդից ինչ յուր ունես:
Բանից երեաց, որ իմ չարփաղարը և տասնումէկ ուրիշ
աղբուզաղիներ մի քանի շարաթ առաջ մաքսանենք ապրանք
են տարել Շուշի: Երբ մաքսանենքները երախից դուրս գալիս
են լինում, ոսւս սահմանապահ զինուորները նկատում են և
սկսում են հրացանաձգութիւն թուրքերի վրայ. սպանում են
չորս ձի և մի մարդ վիրաւորում, չորս բեռ ապրանք տանում:
Վիրաւորուածը հարցնող կնոջ ամուսինն է լինում, սակայն
զինուորների ձեռքը չէ ընկնում, ինչպէս և միւսները:

Բացի մեղանից օդայում կան մի քանի թուրք հիւրեր: Սկսում է երկար ու բարակ զրոյց, մինչեւ ընթրիքը կը բերեն: Խօսակցութեան զինաւոր նիւթը, ինչպէս և միւս գիւղերում,
զողութեան, դաշագութեան կամ կրօնական հարցերի մասին է:
Շուշիցի թուրքը շատ հմուտ է կրօնական գիտութեան մէջ և
մի առանձին սիրով է բացադրում ուամիկ գիւղացիներին զու-
րանի բովանդակութիւնը:

Վերջապէս ընթրիքը բերին, ինձ և մահմեդականների հա-
մար առանձին-առանձին: Մեզ հիւրասիրում են զոմչի մաից
պատրաստած «բօզբաշով»: Գոմչի միան անհամ և ծանրամարս
զայց, բայց թուրքերը մեծ ախորժակով են ուտում: Բոլորուել
են մի մեծ ամանի շուրջ և միասին են ուտում, լուռ և մըսա-
խոհ:

Ընթրիքից յետոյ թուբքերը կատարում են իրանց նամազը: Գիւղայիները նամազի յայտնի շարժողութիւններն արագ-արագ են անում, կարծիս, պարաւականութիւնից ազատուելու համար և շուտ վերջացնում են աղօթքը: Այդպէս չէ վարում շուշեցի թուբքը, նրա շարժուածքները ծանր են և սահուն, աղօթքի խօսքերն արտասանում է բարձր և մի առանձին շեշտով, այնպէս որ նամազը բաւական երկար է տևում: Նամազը վերջացնելուց յետոյ շուշեցին սկսում է գիւղացիներին սովորեցնել լաւ նամազ անելը և պատուիրում է, որ այնուհետև նրանք լուրջ վերաբերուեն դէպի աղօթքի ծխակատարութիւնները:

Պառկում ենք քննելու բոլորս միևնույն օդայում: Իրեւ պատիւ անկողինս ձգում են բուխարու մօս: Կէս գիշերին յանկարծ զգում եմ, թէ մի ինչ-որ բան խեղում ինձ: Ուզում եմ տեղից բարձրանալ, ծանրացած զլուխս հազիւ եմ կարողանում շարժուել... օդ չը կայ: Գոմը և օդան տաք պահելու համար ամեն ծակ ու ծուկ ծածկել են, նոյնիսկ բուխարու երդիկը մի խուրձ խոտ են կոսել, որ ներսը ցուրտ չը մտնի: Խոկ գոմի բազմաթիւ կենդանիների և օդայի մարդկանց ներկայութիւնը օդը փշացրել է, թթուածին չէ մնացել: Երեսում էր, որ քնած թուրքերը, նոյնիսկ անասունները, նեղուում էին, որովհետև անհանդիսա շարժումներ էին գործում և ծանր չնշում: Հազիւ կարողացայ ձեռքս մեկնել և երգիկի միջից խոտը հանել... զրսի մաքուր օդը ներս մտաւ և մի քանի բոպէից յետոյ կենացնացրեց բոլորիս:

* *

Հետեւեալ օրը գուրս եկայ գիւղը պտանելու, որովհետեւ նախօրօք որոշուած էր մի օր Աղբուլաղում հանգստանալ: Այս գիւղից արդէն ամեն ինչ տարբերում է: Լեռները ցածր են և մերկ: Բուսականութիւնն ալլքատ է, տեղ-տեղ երեսում են արճեստական անկած ուռենիներ և կաղամախներ (ТОПОЛ): Գիւղական տները կառուցուած են ամբաղջովին հողի երեսի վրայ և նման չեն զարադամի, որի մի մասը գետնի տակ է լինում: Պատերը թեք են և շինուած գորշ ցեխից: Տները հիմքի մօալայն են, խոկ դէպի շինութեան կատարն աւելի նեղ և ծածկուած են տափակ կտուրով: Գիւղացիների հագուստն էլ է տարբերում: Կանանց շորը, որ համապատասխանում է գերիացին, կարծ է, հազիւ է համառում մինչև ծնկները, սրունգները մերկ են մնում, կարծես այս կանաքը ցանկութիւն ունեն «գէկոլտէ» անել, այն էլ ներքեից:

Տղամարդիկ միշտ հագնում են կապոյտ կտորից կարած շորեր, փափախի փոխարէն դնում են մի տեսակ կլոր զլիսարկ,

որ կարած է լինում կապոյտ մահուղից և շատ նմանութիւն ունի պարսկական հին սաղավարտին: Թուրքը և պարսիկը իր օրում գտակը զլիխից չէ հանում, նոյն իսկ քնած ժամանակը, Այդ վատ սովորութիւնն առաջացնում է զլիսի կաշու հիւանդութիւններ, Բացի այդ մահմզղականները—ժողովրդի ասած—միշտ «զլիխից խեղճ» են լինում, այսինքն՝ զլուխը հեշտութեամբ է մրսում:

Գլուխը ապաք պահելու սովորութիւնը շատ հինուց է մըսացել: Յոյն պատմաբան Հերոդոտը (450 թւականին Քրիստոսից առաջ) գրում է, թէ Պելուզեան գաշտում, ուր պարսիկները յաղթութիւն էին տարել եղիպտացիների վրայ, եղիպտացիների և պարսիկների ոսկորները հաւաքել էին և երկու առանձին թմբեր կազմել պարսիկների գանգերը քարին խփելիս, հեշտութեամբ էին փշրւում, մինչդեռ եղիպտացիներինը աւելի ամուր էին: Գանգերի ամրութեան զանազանութիւնը Հերոդոտը հետեւալ կերպով է բացադրում: Եղիպտացիները սովորութիւն ունեին մանկութիւնից զլուխ ածիլել և սովորեցնում՝ էին դիմանալ արեղակի ճառաղայթներին, իսկ պարսիկները, ընդհակառակը, ծննդեան օրից սկսած զլուխները միշտ փաթաթած էին պահում:

Եւ Պարսիկները մինչև այժմ պահել են այդ սովորութիւնը: Աղբուլազում չորս մեծ և քաղցրածնուր աղբիւր կան, որոնցից և ստացել է իր անունը: Դիմում եմ զէպի մօտակայ աղբիւրը, ուր կանայք լողացնում էին ուղիղ աղբիւրի տաշտակի մէջ զիֆտերիտով մեռած մի երեխայի: Միւս աղբիւրի մօտ մանր տղաներ և աղջիկներ հաւաքուած խաղում էին: Երբ ինձ տեսան, վախեցած իսկոյն փախան, սակայն քիչ յետոյ սիրտ առնելով հաւաքուեցան մի տեղ և հետաքրքրութեամբ ակսեցին ինձ դիտել: Իսկ երբ խօսեցի թուրքերէն, նրանք իրար երեսի նայեցին, քրքջացին և նորից սիրտ առնելով, աւելի մօտեցան! Լուռ իրար դիտում էինք:

Երեխաներից շատերը վախտ էին, մեծ փորով, կեռացած ոտերով: Աղջիկներից շատերը սիրուն էին, մեծ և սև աչքերով, սպիտակ մորթով: բոլորի մազերը «հիւալով» ներկուած էին *). շատերի գէմքերը ոչ-մանկական լրջութիւն էին արտացյատում:

* *

Երեկոյեան օդայում գիւղացիներ էին հաւաքուել ժամանակ անցկացնելու, կար և մի պարսիկ պաշտօնեայ, դեղին կո-

*) Պարսիկները հաւատացած են, թէ «հիւանա» յատկութիւն ունի զլիսի տաքութիւնը զուս քաշելու, կաշին ամրացնելու, մազերը կակլացնելու և նոյնիսկ զլսացաւերը զարմանելու:

ճակներով կապոյտ համազգեստը հագին, ոև երկար գդակին կացրած «Հիր-խուրչուդ» նշանը, Միջին հասակի մի նիհար մարդ էր այդ, մէջքից կրացած, դալուկ գէմքով, խոչոր, մթնած աշքերով. շարժումները դանդաղ էին, հազիւ էր մի երկու խօսք ուղղում խօսակիցներին:

—«Թրիեաթի» է,—ականջիս փախսաց շուշեցին, զլխով ցոյց տալով պարսիկ պաշտօնեային,—թրիեաք (ափիոն) ծխելու ոսկորութիւն ունի. ծխելու ժամանակն եկել է, գրա համար է այդքան թուլացած:

Եւ իրաւ, քիչ ժամանակից յետոյ պարսիկը կրակ պահանջեց, չոքեց ծնկների վրայ, զրպանից հանեց ափիոնի տուփը և չիբուխը, սա սովորական չիբուխից տարբերւում է միայն զըլխով. Ափիոնի չիբուխը կազմուած է երկու մասից՝ փայտէ խողովակից և կաւէ զլխից, որ փոքրիկ պուլիկի նման է, ձուի մեծութեամբ. փայտէ խողովակն ամրացրած է պուլիկի բերանում, իսկ զլխի վրայ մի փոքր ծակ է բացած: Պարսիկը բակւայի մեծութեամբ ափիոնը կակլացրեց կրակի վրայ և կացրեց ծակի մօտ, վերցրեց ունելիքով մի մեծ վառուած ածուխ, մօտեցրեց ափիոնին, մէջքից կրացաւ և սկսեց հողովակը ծծել. նրան չէր յաջողուում, ծուխը չէր զալիս, ձեռները դողլողում էին, ուստի չէր կարողանում կրակն ափիոնի մօտ պահել: Բարկութեամբ նորից կրակ պահանջեց, բերին «մաղալի» մէջ վառուած ածուխներ: Պարսիկը վերսկսեց ծխելու փորձերը, սակայն չէր յաջողուում ափիոնը վառել: Ծխելու ցանկութիւնն այնքան էր սաստկացել նրա մէջ, որ ամրող մարմնով դողում էր նա. կարմրած աչքերի խնձորները ասես ահա դուրս կը գան բոյներից. ոռւնդները լայնացած, թուքը բերանին ծանր շունչ էր քաշում: Յանկարծ ունելիքը և չիբուխը նա գետին շըպրտեց և սկսեց երեխայի պէս հեկեկալ... Նորից վերցրեց չիբուխը և ունելիքը, կրակն ափիոնին մօտեցրեց և, ուրախութիւն, ցանկալի ծուխը բերանն եկաւ: Բաւականութիւնից աչքերը կիսափակեց և կծու ծխի քուլաները սկսեց բերանից և պնչերից դուրս հանել: Նա շարունակում էր ապահութեամբ ծխել, բերանի մի կողմով պարբերաբար ծծելով չիբուխի խողովակից, իսկ միւս կողմով ափիոնի մօտ պահած կրակը Փչելով, որ ը հանդչի, Թմբեցնող ծուխը մեզ վրայ էլ ազդեց, բայց այդ պարսիկի փայթը չէր, նա զրախոտի մէջ էր. կիսայնուած էր դօշակի վրայ, աչքերը փակած, կիսաբաց շրթունքները ժպտում էին, ամբողջ զէմքն անհուն բաւականութիւն էր ցոյց տալիս: Երկար ժամանակ այդ զրութեան մէջ մնաց: Վերջապէս աշխատ-ժութեամբ նա նստեց տեղը. բոլորովին կերպարանփոխել էր,

կարծես առաջուայ դանդաղիոս մարդը չը լինէր. աչքերը փայլում էին տեսդային կրակով, դէմքը հռանդ էր արտայայտում. նա սկսեց քթի տակին մոռապալ ինչ-որ երգ:

Գիւղացիները զգուանքով էին նայում այդ թրիեաքի պաշտօնեային, սակայն ոչնչով չէին արտայայտում իրենց զգացմունքը, և շարունակում էին անվերջ զրոյցներ:

**

Հետեւեալ օրը շարունակում ենք մեր ճանապարհը, Գիւղերն այժմ յաճախակի են պատահում. Թօխումդիլ, Սումադիլ, Մէհտար, Զախմախբուլաղ, Զայքեանդ, Հիւսէյնարար, Դըղգըշա թուրքաբնակ զիւղերը յաջորդում էին մէկը միւսին. Զայքեանդ զիւղից վերջանում է Ղարադաղը, և սկսւում է Մավախան մալը. Սյատեղ մեր չարփաղարի օգնականը, մի քսան տարեկան տղայ՝ իր վարձն առաջուց ստացած լինելով, յարմար առիթից օգուտ քաղելով՝ թողնում է իր տիրոջը և փախչում իր զիւղը, հետը տանելով չարփաղարից գողացած տասը կողէկանոց «զարպահ» դանակը:

Վերջին զիւղերն անցկացրինք Սարանդ թուրքաբնակ զիւղում, Քաղաքի մօտիկութիւնն արդէն զգացում էր. այստեղ միայն զիւղերեւ համար ինձնից վերցրին մի բուրլի, մինչդեռ Ղարաբղում և Ղարադաղում զիւղացիները ձրի էին թողնում իրենց մօտ զիւղերեւ. ևս վճարում էի միայն ուտելելէնի համար, իսկ չարփաղարը իր ծիկրի կերի համար: «Սարանդ» անունը յիշեցրեց մեր հին տնաբոյծ զիւնականներին, որոնք հաստատում էին, իր թէ Մարանդ քաղաքի անունը գուրս է եկած երկու խօսքից, այսինքն՝ «մայր» և «անդ». իրը թէ այդ քաղաքում թաղուած է եղել Նոյի մայրը, ուստի քաղաքին առւել են Մայրանդ կամ Մարանդ անունը: Եթէ այդ ծիշտ է, ուրեմն Սարանդ զիւղի անունը բաղկացած է երկու խօսքից՝ «սար» և «անդ». սակայն այս զիւղի մօտ իսկի սար էլ չը կայ:

Սարանդից սկսած ճանապարհին յաճախ պատահում էինք բաղմաթիւ անցորդների. ձի հեծած կանաքը չազրաների մէջ փաթաթուած, «ուրբանդ» երեսներին քաշած, սէյիղների և զիւղիների խմբեր, ուղտերի քարփաններ խառնուել են միմինաց: Մեր մօտով անցնելիս՝ ճանապարհորդները մահմեղականի սովորութեան համաձայն նախ բարեւում էին իմ ուղեկից մահմեղականներին և յետոյ ինձ:

Սյատեղի լեռները բուսականութիւնից բոլորովին զուրկ են, երեւում են գոյնըզգոյն հողային սարեր, կանաչ, կապոյտ, զեղին, կարմիր, ծիածանի բոլոր ներկերով: Միտս ընկաւ. Շատախի մասին ասուածքը:

«Մոկաց սարեր պետ-պետ (մեծ) քարեր.
Շատխուռ երկիր բալաջ (գոյնզպոյն) սարեր»

Բարձրանում ենք Փայա սարը, որտեղից մեր աչքերի առջև յանկարծակի բացւում է թաւրիզի տեսարանը։ Տները գեռ չեն երեսում այգիների միջից, քաղաքը նմանում է մի վիթխարի այգեստանի, որի ծայրը գնում է և հորիզոնում անհետանում։

Պատմական քաղաքի տեսքն ինձ ձգեց պատմական խոհերի մէջ։ Արդեօք ճիշտ է, որ Մեհրուժանի սպանութեան առիթով է ծագել այս քաղաքի անունը, որ թաւրիզ խօսքը «ղա» և «վրէժ» խօսքերի ազաւազումն է։ Ճիշտ է, թէ այդ էլ «Մարանդ» անուան բացադրութեան սկս է…

Յանկարծ ձիս մի թոփչք գործեց դէպի մի կողմ և սկսեց վախիցած փանչալ։ Այդ անսպասելի շարժումից հազիւհազ կարսղացայ թամբի վրայ նստած մնալ, նայեցի դէպի աջ՝ ձիու վախինալու պատճանն իմանալու… և զարմանքից ապշած մընացի Քարերի կոյտերի միջից, հողային որջերից դուրս էին սողում դէպի մեզ ինչ-որ մարդանման արարածներ զարհուրելի կերպարանքով, կարծես նոր գուրս եկած լինէին դժոխվից։ Դըրանք բորոտութեամբ հիւանդացածներ են, որոնց պարսից կառավարութեամբ թողլ չէ տալիս ապրելու քաղաքներում կամ գիւղերում, ուստի այդ թշուառները ստիպուած են լինում բանուկ ճանապարհների մօտ որջեր շինել և ողորմութեամբ ասլրել։ Յիշեցի Խորենացու զրածը Մեծն Եւրսէսի ժամանակների մասին։ «… բորոտները հալածուում էին իրեն օրէնքով պիղծ համարուածներ, և ուրուկներին քշում էին, որ նոցա ախտը ուրիշներին չը փախուի։ Նոցա բնակարաններն անապատներն ու ամայի աեղերն էին, և ծածկոցը—քարերն ու մացառները. նոքա ոչ ոքից միիթարութիւն չէին գտնում իրանց թշուառութեան մէջ…»

Անցել են բաղմաթիւ դարեր, և վերաբերմունքը դէպի թշուառ հիւանդները նոյնն է մնացել։

Իմ տեսած բորոտների մէջ կային աղամարդիկ և կանաքը, ծերեր և երիտասարդներ։ Մի քանիսների երեսները թնթոնած էին (օդուղուած)։ Ճակատի բնական խորշերն աւելի խոր ընկած են, ծալքերն աւելի հաստ, նամանաւանդ յօնքերի վերեր և յօնքամիջի մօտ։ Յօնքերի մազերը թափուած են, իսկ կաշին իջել է աչքերի վրայ, այնպէս որ աչքերն իրականից փոքր են երեսում։ Քիթը հաստացած է և լայնացած։ Հրթունքները նոյն սկս հաստացած են, իսկ կզակը քառակուսի ձեւ ստացած։ Ականջները նոյնակս հաստացած են և բշտիկներով ծածկուած։

Այդպիսի երեսները դարձմանալի նմանութիւն ունեն առիւծի խրոխտ դէմքին:

Միւսներն ընդհակառակը, զարհուրելի կերպարանք ունեն: Սրանց մարմնի կաշին չորացած է և ճաքճքած, տեղական խոցերով պատած: Կարկամած ձեռները, որոնց մատերի կէսը մինչև յօդերն ընկած են և բայ խոցեր են երեսում, կառկառում են դէպի ձեզ և ողորմութիւն հայցում: Մի քանիսներն արգէն գրկուել են ոտների և ձեռների թաթերից: Կար և մի երիտասարդ կին, որի երեսի վրայ քթի տեղ մի մեծ և խոր ծակ է բացուած, մի աչքը փոս ընկած-փակուած է, իսկ միւս սպիտակած աչքը սեղուել է մեր երեսին, կարծես, մարմարեայ հին արձանի աչք լինի: Բարեբախտաբար այդպիսի խոցաւոր հիւանդները ցաւեր չեն զգում, և երեսում էր, որ բոլորովին անտարբեր են վերաբերուում դէպի իրանց վիճակը:

Չիաները քշեցինք և հեռացանք այդ զարհուրելի տեղից: Մի քանի ժամից յետոյ արգէն մտնում էնք թաւրիզի նեղ փողոցների լարիրինթոսը:

ԲԺ. Ք. ՕՀԱՆԵՍԱՆ